«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

ՈՐՈՇՈՒՄ N 2

18 դեկտեմբերի 2019 թվականի

«Առկա ուսուցման բակալավրիատում ուսումնառության, գիտելիքի գնահատման և վարչարարության կազմակերպման կարգը» հաստատելու ու գիտական խորհրդի՝ 2019 թվականի հունիսի 18-ի նիստում (արձանագրություն N 12) հաստատված «Առկա ուսուցման բակալավրիատում ուսումնառության, գիտելիքի գնահատման և վարչարարության մեխանիզմների կազմակերպման կարգը» ուժը կորցրած ճանաչելու մասին

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005 թվականի հոկտեմբերի 6-ի N 1718-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 17-րդ կետի 8-րդ ենթակետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հաստատել «Առկա ուսուցման բակալավրիատում ուսումնառության, գիտելիքի գնահատման և վարչարարության կազմակերպման կարգը» (կցվում է):

2. Ուժը կորցրած ճանաչել «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝ 2019 թվականի հունիսի 18-ի նիստում (արձանագրություն N 12) հաստատված «Առկա ուսուցման բակալավրիատում ուսումնառության, գիտելիքի գնահատման և վարչարարության մեխանիզմների կազմակերպման կարգը»:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

2019 թ. դեկտեմբերի 18
Երևան